



ՔԱՐՈԶ

ՎԱՐԴԱՆ Ռ. ՎՐԴ. ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ

(Թրիլիսի վաճական Ա. Գեղարք
և կեղծու վաճախյու)

Ս. Էջմիածնի ԽՈՒՋՈՒՐԴԻ Բ

«Բարեխօսութեամբ վերին բա զօրաց,
Միշտ անշարժ պահեա զԱրու Հայկազնեայց»:

ՇԱՐԱԿԱՆ

Ողովովուրդների կյանքում սրբություններ կան, նվիրական վայրեր, որոնք սերտորեն կապված են տվյալ ժողովրդի պատմության հետ, նրա կյանքի, կոտնական զգացմունքների, նրա սրտի ու հոգու հետ: Այդ սրբությունները միաժամանակ հանդիսանում են բարոյական միասնության խորհրդանշաններ տվյալ ժողովրդի բոլոր հատվածների միջև, որոնցից ժողովուրդն ստանում է իր պատմության մռայլ ու ճակատագրական օրերին՝ բարոյական միթարություն, հույս և լույս՝ ապագայի համար:

Մի այդպիսի ժողովորդական սրբություն է հանդիսացել և է մեր օրերում էլ, հայ հավատացյալ ժողովրդի համար, մեր Արարատյան նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածնինը, որի անշան, պատմության և գործունեության հետ սերտորեն կապված է հայ ժողովրդի հոգեոր մշակույթի դարպացումը, մեր ժողովրդի կյանքը, պատմությունը և գործունեությունը, դարուց ի դարս: Ս. Էջմիածնինը «Հայի զգայուն սիրուն է եղել,— զրում է աղդիս Վեհափառ Հայրապետը,— որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն ցավերով և սակավ ուրախություններով»:

Ս. Էջմիածնինը իր մայրական թևերի տակ պահել է ու պահպանել երկրագնդի վրա ցաքուցրիվ եղած հայ ժողովրդի բեկորները: Ամենայն Հայոց Հայրապետության կենտրոն Ս. Էջմիածնինը «Հայի ստեղծող միտքն է եղել, որ, լուսավորված քրիստոնեական երկնային լույսով, ստեղծել է գրավանություն, արվեստ» հայ ժողովրդի համար: Ս. Էջմիածնինը մեր ժողովրդի հոգեոր կյանքում կատարել է շատ պատվավոր ու շնորհընկալ աշխատանք: Ս. Էջմիածնինը հայ հավատացյալ ժողովրդի հոգում բազմել է այնպես ամուր, ինչպես Արարատյան դաշտում վեհանիստ Մասիս սարը:

Ս. Էջմիածնինը կառուցվել է մեր հավատի հայր և հոգվոց լուսավորիչ Ս. Գրիգոր Պարթև հայրապետի տեսիլքի համաձայն: «Տեսեալ զոյս մեծ հայրապետին Գրիգորի, պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային: Եկալիք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյց: Ու հայ հողի վրա, հայ ժողովրդի հավատի ու բարեպաշտության շնորհիվ կամար առ կամար բարձրանում էր Ս. Էջմիածնի պատմական Տաճարը:

«Տեղին այն լիցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց և աթոռ քահանայութեան»:

Այս այսպիսի հոգեւոր հարուստ ժառանգությունն է ստացել հայ ժողովուրդը իր նախնիքներից, որոնք ապրել ու աշխատել, սիրել ու կամել են Ս. Էջմիածնի գաղափարով և Հայրենիքի նվիրական զգացմունքներով։ Դարեր շարունակ իր քաղաքական անկախությունը կորցրած մեր հայրենասեր ժողովուրդը Ս. Էջմիածնի վրա նայել է իրեն իր երկրորդ՝ հոգեւոր Հայրենիքի վրա, և սաղմուսերգով պես երգել է. «Եթէ մոռացայց զքեզ, Երուսալէմ, մոռացի զիս աչիմ; Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ լիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուազեցից զքեզ, Երուսալէմ, սկիզբն ուրախութեան իմոյ» (Սաղմ., ձև 5—7):

Երբ քաբելացիք կործանեցին Երուսաղեմը, իսրայելացիներին գերի վարեցին, նրանք նստած ուոփ ծառերի տակ Բաքելոնի գետերի ափին, իրենց տալիջների վրա երգում էին. «Երուսաղեմ, Երուսաղեմ, թողիմ լեզուս կպչի իմ քիմքիս, եթե մոռանամ քեզ, թողիմ աչ ձեռքը իր ծառայությունը շատարիս: Սրանով իսրայելացիները ցուց էին տալիս իրենց հայրենասիրությունն ու նվիրվածությունը իրենց հոգեւոր ու քաղաքական կենտրոն Ս. Երուսաղեմին:

Մենք էլ պետք է կրկնենք այդ խոսքեցը. «Էջմիածն, մենք քեզ շենք մոռանամ: Սակայն քավական չէ խոսքով արտահայտվելը, այլ պետք է գործով ցուց տալ, որովհետեւ սխոսքն առանց գործի մեռած է», ըստ առաքելական պատվերի:

Չուր չէ, որ մարդկային կյանքը նմանեցվում է մի ալեծուի ծովի, որի վրա լողում է նավը: Եթե նավը հմուտ առաջնորդ և ղեկավար ունի, նա մինչև անգամ ամենի աղիքների դեմ կովում է, պայքարում բնության ուժեղ արհավիրեների դեմ և նավի ղեկը ուղղում է դեպի լուսատու փարուղ, դեպի փրկության նավական գալութերի:

Չուր չէ, որ մարդկային կյանքը նմանեցվում է մի ալեծուի ծովի, որի վրա լողում է ամենախալաղ ժամանակին, նա կարող է տարութերվել և զարնել քարածայուերին և փշուղ-փշուր խորտակվել ու անհետ փորչել: Այսպես է նաև ժողովրդի կյանքը:

Հայ ազգի անկման զանազան շրջաններում, որքան էլ նա կորցրել է իր քաղաքական ինքնուրունությունը, սակայն միշտ մոխրի տակ պահել է մի կալծ, որը բարեպատեհ հանգամանքներում միշտ առկայծել է, որովհետեւ մեր ժողովրդի համար ճակատագրական այդ պահերին շեն պահեմ արթուն նախապետներ, որոնք իմաստությամբ, շրջահայեցությամբ և խիդախությամբ փրկել են հայ ժողովրդին ստույգ

բնաշնչման վտանգից և առաջնորդել ղեկի խաղաղ նավահանգիստը: Ո՞վ չի հիշում հրախուգեստ սրտով մեր հավատի հայր Լուսավորչին, որ տվել է մեզ մեր ազգային եկեղեցին, ոմեր կյանքի լուսատու լապտերը, Ավետարանի լուսով հայ կյանքը լուսավորող ու պայծառացնող» այս հաստատությունը:

Ո՞վ չի հիշում թարգմանիշ մեծ վարդապետներին, որոնք գիր ու գրականության շնորհիվ, փրկեցին հայ ժողովրդին ստույգ բնաշնչումից: Ո՞վ կարող է մոռանալ մեր հայրենասեր ու ժողովրդանվեր հայրապետներին, հոգեւորականներին, որոնք մեծ աշխատանք են կատարել հայ ժողովրդի կյանքում: Ավելին, պատմական աղետների ժամանակ հայ հոգեւորականն է սփոփել, մխիթարեական հայ ժողովրդին, օգնության հասել նրան և ի պահանջել հարկին՝ կովել ու նահատակվել իր ժողովրդի հետ միասին:

Սահակ Զորագիրեցի կաթողիկոսը իր խնդրանքով ընդգուազ գնաց արարացի զորավարին և փրկեց հայ աշխարհը ավերածությունից: Պատմական այս փաստը ցուց է տալիս՝ ինչքան հայ հայրապետները նվիրված են եղել ազգին: Եվ Սահակ Զորագիրեցին միակը չէ: Ս. Էջմիածնի հայրապետները, լուսավորչից մինչև Գեորգ Զ. հայրենասեր ու մեծագործ Հայրապետը, եղել են հայ հավատացյալ ժողովրդի հետ, աշխատել ու փորձել են հանուն հայ ժողովրդի կարիքների, սփոփել, մխիթարել ու դաստիարակել են սերունդներ՝ Ս. Էջմիածնի սփոփել և կայսերականիքի գաղափարով: «Ե՞նչ կոմանայինք և ի՞նչ կլինեինք, ի՞նչ եկեղեցին մեր դաստիարակը անցյալում,— գրում է Վեհապառը,— և միթե հանցանք և չոր ապերախտություն չէ» երես դարձնել այն հաստատությունից, որ դարեր շարունակ պահել ու պահպանել է մեզը:

Մեր գեղեցիկ Հայրենիքը եղել է մի կամուրջ Ասիայից գեպի նվրոպա անցման ճանապարհին: Իր պատմության զանազան շըրշաններում ուսեի տակ տրորվել է Հայաստան աշխարհը, իսկ հայ ազգը միշտ զենքը ձեռքին պաշտպանել է իր անկախությունը, իր պատիվը, իր Հայրենիքը: Բայց պատերազմն իր հետ առաջ է բերել սովոր, աղքատություն ու աղերածություն, իսկ վերջն էլ ստեղծել է գաղթականություն, որին միշտ էլ ենթակա է եղել Հայաստան աշխարհը, մեր ժողովրդը: Հայ մարդը թողել է իր քաղցր, սըրբազան Հայրենիքը, հայրենի օդն ու ջուրը, որոնք սնուցել են իրեն, թողել է նա իր նախնիքների շիրիմները, իր քրտնաթոր աշխատանքի արդյունքները և, իր և իր ընտանիքի կյանքը փրկելու համար՝ անցել է ղե-

պի օտար երկրներ, «գօրէնս մոլորական աստեղաց», ըստ Հայրենասեր պատմիշի տխուր վկայության:

Սիյուռքում հայկական այն գաղութները, որոնք պահել են իրենց ազգային սովորությունները, լեզուն, կրոնը, կարողացել են մաքանել օտարամոլ ազգեցությունների դեմ և անաղարտ պահել իրենց հայկական դիմագիծը: Բայց այն գաղութները, որոնք չեն պահել իրենց ազգային այդ ժառանգությունները, կուզ են զնացել օտար ազգությունների մեջ: Թող խոսքերին վկա լինի Լեհաստանի հայկական մեծ գաղթականությունը, որը գաղթել էր Անիից և, մի ժառանգոլ ու ծախված եպիսկոպոսի՝ Նիկոլ Թորոսովիչի պատճառով, ստիպվեց ընդունել կաթոլիկությունը, մոռացավ իր ազգային եկեղեցին և ընդմիշտ կորալ հայ ժողովրդի համար: Այսօր միայն Հնագարյան կոթողներից ու գերեզմանաբարերից կարելի է իմանալ, որ Լեհաստանում մի ժամանակ ապրել է Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուն հավատարիմ հայ ժողովուրդ:

Այժմ սակայն պատկերը փոխվել է: Հայ ժողովուրդը գաղթելու փոխարեն ներգաղթում է այսօր: Ծնորհիվ Սովետական բարեխնամ կառավարության հայրական հոգածության տարագրված հայ ժողովուրդը աշխարհի բոլոր կողմերից վերադառնում է իր երազական ժարենիքը:

Հայ ժողովուրդի հայրենասեր զավակները միշտ եւ երազել են ներգաղթի այդ երջանիկ սլահը: Երիմյան Հայրիկն ասում էր. «Արդու մի օր կա աղավնին եղենի ճյուղը կտուցին բոնածո»:

Այո՛, մենք այսօր տեսնում ենք այդ երազանքն իրականացած՝ շնորհիվ Սովետական իշխանության խելացի քաղաքականության: Այժմ ամբողջ Հայությունը հավաքվում է իր պատմական Հայրենիքում, Ս. էջմիածնի շուրջ:

Այժմ մեր Հայրենիքը զարգանում է և առաջ ընթանում գիտության, տեխնիկայի և արվեստի բոլոր բնագավառներում: Մեր Հայրենիքի ձեռք բերած նվաճումները արդար հպատությամբ են լցնում լուրաքանչյուր հայ հավատացյալ ու Հայրենասեր մարդու սիրտը:

Մենք բոլորս միասին, ձեռք ձեռքի տված, հավատարիմ կերպով պետք է ծառայենք մեր Հայրենիքին և, ի պահանջել հարկին, անցյալի հայրենասեր հայ հոգեռականության օրինակով, մեր արյունով ու կյանքով պաշտպանենք Հայրենիքի սրբազն հողը և այդ հողի վրա միշտ կանգուն ու պայծառ պլազմող կուսավորչի կանթեղը, Ս. էջմիածնինը, Ամենայն Հայոց Հայրապետության զարավոր կենտրոնը:

Աղոթե՞նք Բարձրալին, որ ավելի աճի, բարգավաճի մեր սիրասուն Հայրենիքը:

Աղոթե՞նք Բարձրալին, որ անսասան մնա լուս խորան Ս. էջմիածնինը հավիտյան հավիտենից, ամեն:

